

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2015թ-ի նոյեմբերի 30-ին կայացած մեծ խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ղեկանի 2014/ 2015 ուսումնական տարվա հաշվետվությունը:

Նիստին մասնակցում էր ԵՊՀ պրոռեկտոր Ա.Գրիգորյանը: Ընտրվեց նիստի նախագահ՝ պրոֆ. Հ.Ավանեսյանը:

Նիստի նախագահը հաստատման դրեց օրակարգը և զեկուցողներին տրվող ժամանակը:

Որոշեցին՝ Հաստատել նիստի օրակարգը:

Ֆակուլտետի ղեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց 2014/ 2015 ուս.տարվա աշխատանքների հաշվետվությունը: Ֆակուլտետի աշխատանքներն իրականացվել են ԵՊՀ-ի կանոնադրության և ռազմավարական ծրագրերին համապատասխան և ընթացել երեք հիմնական ուղղություններով՝ գիտական, ուսումնական և գիտահետազոտական: Հատկապես նշվեց ֆակուլտետի կողմից կազմակերպված միջազգային 5 գիտաժողովների մասին, որոնց ակտիվորեն մասնակցել են և ասպիրանտներն ու ուսանողները: Ֆակուլտետի հիմնական աշխատողները 52 են, դասախոսական կազմն ակտիվորեն մասնակցել է որակավորման բարձրացման աշխատանքներին: Հաշվետու տարում եղել են բազմաթիվ տպագրություններ, հոդվածներ, դասընթացների ծրագրեր: Սոցիալական արդյունքները ղեկանի և ղեկանատի աշխատանքների վերաբերյալ դրական են:

Արտահայտվեցին՝ պրոֆեսորներ Ա.Մանասյանը, Ս.Զաքարյանը, Գ.Շահվերդյանը, ուսխորհրդի նախագահ Դ.Թորոսյանը, որոնք ղեկանի և ֆակուլտետի մեկ տարվա աշխատանքը գնահատեցին դրական: Արտահայտվողները նաև քննարկեցին մի շարք հարցեր՝ կապված աշխատողների սոցիալական ապահովագրության, տպագրության ներկայացվող աշխատանքների քանակից որակին անցնելու անհրաժեշտության, մասնաշենքում բուժկետի բացման և այլ հարցերի վերաբերյալ, որոնց պատասխանեց պրոռեկտոր Ա.Գրիգորյանը:

Որոշեցին՝ Գնահատել ֆակուլտետի և ղեկանի 2014/ 2015 ուս.տարվա աշխատանքը բավարար:

Դրվեց քվեարկության, որն անցավ միաձայն:

Նիստի նախագահ՝ Հ.Ավանեսյան

Նիստի քարտուղար՝ Ս.Սարգսյան